


1.2.7. Առևտուր և այլ ծառայություններ
(սպառողական շուկա)

ՀՀ սպառողական շուկա (առևտրի շրջանառության և ծառայությունների ծավալը)

| | 2005թ. հունվար-մայիս | | Ընդհանուրի նկատմամբ, % | |
|---|----------------------|-----------------------------------|------------------------|--------------|
| | ծավալը, մլն. դրամ | 2004թ. հունվար-մայիսի նկատմամբ, % | 2004թ. | 2005թ. |
| Առևտրի շրջանառության և ծառայությունների ծավալը, ընդամենը | 463447.0 | 107.1 | 100.0 | 100.0 |
| <i>այդ թվում՝</i> | | | | |
| Առևտրի շրջանառություն ¹ , ընդամենը | 351947.0 | 105.5 | 76.6 | 75.9 |
| <i>դրանից՝</i> | | | | |
| մանրածախ առևտրի շրջանառություն | 285417.0 | 104.4 | 62.8 | 61.6 |
| Ծառայություններ ¹ | 111500.0 | 113.4 | 23.4 | 24.1 |

Սպառողական շուկայում առևտրի շրջանառության և ծառայությունների ծավալի տեսակարար կշիռները
(ընդհանուրի նկատմամբ, %)



2005թ. հունվար-մայիսին գրանցվել է սպառողական շուկայի ծավալի 7.1% աճ՝ 2004թ. հունվար-մայիսի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով: Ընդ որում, դրանում 0.7 տոկոսային կետով աճել է ծառայությունների ծավալի տեսակարար կշիռն ու համամասնորեն նվազել առևտրի շրջանառության տեսակարար կշիռը:

¹ Սկսած 2005թ-ից ցուցանիշները ներկայացված են ըստ «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի» :

Մանրածախ առևտուր


2005թ. հունվար-մայիսին մանրածախ առևտրի շրջանառության ընդհանուր ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 285417.0 մլն. դրամ, որը 2004թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 4.4%-ով: 2005թ. մայիսին ապրիլի համեմատությամբ մանրածախ առևտրի շրջանառության ծավալը, համադրելի գներով, կազմել է 105.4%:

ՀՀ մանրածախ առևտրի շրջանառության ծավալը 2005թ. հունվար-մայիսին

| | Ծավալը, մլն. դրամ | Ընդհանուրի նկատմամբ, % |
|---|-------------------|------------------------|
| Մանրածախ առևտրի շրջանառություն, ընդամենը | 285417.0 | 100.0 |
| <i>այդ թվում</i> | | |
| խանութների | 146881.9 | 51.5 |
| սպառողական ապրանքների շուկաների | 82876.5 | 29.0 |
| գյուղատնտեսական արտադրանքի շուկաների | 8869.2 | 3.1 |
| կրպակների | 25066.5 | 8.8 |
| առևտրի այլ օբյեկտների | 21722.9 | 7.6 |

Մանրածախ առևտրի շրջանառության կառուցվածքն ըստ ձևավորման աղբյուրների, 2005թ. հունվար-մայիսին

(ընդհանուրի նկատմամբ, %)



2005թ. հունվար-մայիսին ՀՀ մանրածախ առևտրի շրջանառության ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ է ունեցել խանութներում և սպառողական ապրանքների շուկաներում իրականացվող առևտուրը՝ 80.5 % (229758.4 մլն. դրամ):

ՀՀ մանրածախ առևտրի շրջանառության ընդհանուր ծավալում առանձնակի տեղ ունեն սպառողական ապրանքների շուկաները, որոնցից ստացված հաշվետվությունների տվյալներով և փորձագիտական լրահաշվարկի հիման վրա, 2005թ. հունվար-մայիսին առևտրի շրջանառության ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 82876.5 մլն. դրամ:


**ՀՀ սպառողական ապրանքների շուկաների առևտրի շրջանառության
ծավալն ըստ ՀՀ մարզերի, 2005թ. հունվար-մայիսին**

| | Ծավալը, մլն. դրամ | այդ թվում՝ ընդհանուրի նկատմամբ, % | |
|-----------------|----------------------|-----------------------------------|---------------------------|
| | | պարենային ապրանքներ | ոչ պարենային ապրանքներ |
| ք. Երևան | 75796.4 | 11.6 | 88.4 |
| Արագածոտն | 101.2 | - | 100.0 |
| Արարատ | 538.9 | - | 100.0 |
| Արմավիր | 1474.2 | 23.6 | 76.4 |
| Գեղարքունիք | 657.4 | 19.5 | 80.5 |
| Լոռի | 1693.1 | 47.0 | 53.0 |
| Կոտայք | 870.1 | 16.3 | 83.7 |
| Շիրակ | 552.6 | 7.8 | 92.2 |
| Սյունիք | 326.2 | - | 100.0 |
| Վայոց ձոր | 94.0 | - | 100.0 |
| Տավուշ | 772.4 | 30.5 | 69.5 |
| Ընդամենը | 82876.5 | 12.7 | 87.3 |

Հարկ է նշել, որ հանրապետության սպառողական ապրանքների շուկաները հիմնականում մասնագիտացված են ոչ պարենային ապրանքների վաճառքով, որի տեսակարար կշիռը սպառողական ապրանքների շուկաների առևտրի շրջանառության ընդհանուր ծավալում 2005թ. հունվար-մայիսին կազմել է 87.3%:

**Սպառողական ապրանքների շուկաների առևտրի շրջանառության
կառուցվածքն ըստ Երևան քաղաքի և ՀՀ մյուս մարզերի**

(ընդհանուրի նկատմամբ, %)



2005թ. հունվար-մայիսին 2004թ. հունվար-մայիսի նկատմամբ հանրապետության սպառողական ապրանքների շուկաների առևտրի շրջանառության ամբողջ ծավալում գրանցվել է Երևան քաղաքի շուկաների առևտրի շրջանառության ծավալի տեսակարար կշռի նվազում 1.1 տոկոսային կետով:

2005թ. հունիսի 1-ի դրությամբ ապրանքային պաշարները մանրածախ առևտրի օբյեկտներում կազմել են 58582.0 մլն. դրամ, իսկ ապահովվածությունը՝ 67 օր:

ՀՀ սպառողական շուկայում իրենց ուրույն տեղն ունեն գյուղատնտեսական արտադրանքի շուկաները: Հունվար-մայիսին այդ շուկաներում իրականացվող առևտրին բաժին է ընկել առևտրի շրջանառության ընդհանուր ծավալի 3.1% կամ 8869.2¹ մլն. դրամը:

¹ Հանրապետությունում գործող գյուղատնտեսական արտադրանքի չկազմակերպված շուկաների առևտրի շրջանառության ծավալները հաշվառված չեն:


Ծառայություններ

2005թ. հունվար-մայիսին մատուցված ծառայությունների ծավալը ընթացիկ գներով կազմել է 111500.0 մլն.դրամ, որը 2004թ. նույն ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 13.4 %-ով:

2005թ. հունվար-մայիսին 2004թ. հունվար-մայիսի նկատմամբ ծառայությունների ոլորտում արձանագրվել է սակագների 0.3 % նվազում, որը հիմնականում պայմանավորված է տրանսպորտի (4.4%), կապի (3.6%), առողջապահության (1.1%), զբոսաշրջության (1.9%) ծառայությունների սակագների նվազումով: Միաժամանակ աճել են՝ սոցիալական, հյուրանոցների և ռեստորանների, կոմունալ, կրթության ծառայությունների սակագները, համապատասխանաբար՝ 17.5, 4.8, 2.8, և 0.6%-ով:

**Ծառայությունների կառուցվածքը
2005թ. հունվար-մայիսին**

(ընդհանուրի նկատմամբ, %)



2005թ. հունվար-մայիսին ծառայությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են կազմել տրանսպորտի (35937.2 մլն.դրամ) և կապի (26475.0 մլն.դրամ) ծառայությունները, համապատասխանաբար՝ 32.2 և 23.7%:

Ծառայությունների կառուցվածքում համեմատաբար բարձր տեսակարար կշիռ ունեն ֆինանսական (10362.9մլն.դրամ), կրթության (8342.5 մլն.դրամ), առողջապահության (7471.3 մլն.դրամ), հյուրանոցների և ռեստորանների (5775.0 մլն.դրամ) ծառայությունները, համապատասխանաբար՝ 9.3, 7.5, 6.7 և 5.2%: